ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.07.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-LO-2019/101

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Մասնակցությամբ՝

Մասնակից՝ «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Մ. Գևորգյանի, Ն. Մկրտչյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 28.06.2019թ. թիվ 26/10894-2019 գրությամբ «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 18.06.2019թ. թիվ 01/61-11599 գրության հիման վրա, 28.06.2019թ. «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

Երևանի քաղաքապետարանը 18.06.2019թ. թիվ 01/61-11599 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/60», «ԵՔ-ԳՀԱՇՁԲ- 19/50» և «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/107» ծածկագրերով գնման ընթացակարգերի գնահատող հանձնաժողովների որոշմամբ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ են ճանաչվել համապատասխանաբար՝ «Տեքստիլ Հոմ» ՍՊԸ-ն, «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ն և «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություններ):

Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթով, գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ հարցում է ներկայացրել ՀՀ պետական եկամուտների կոմիտե:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացված տեղեկատվության համաձայն՝ Ընկերությունները հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ ունեն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ, որոնք գերազանցում են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված շեմը;

Վերոգրյալով պայմանավորված՝ ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետով, առաջարկում եմ Ընկերությունների նկատմամբ կիրառել «Գնումների մասին» օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:»:

Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, ներկայացրել են թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/50» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հարկային պարտավորության առկայության վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 01.07.2019թ.-ին գրությամբ դիմել է «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 28.06.2019թ. թիվ 26/10894-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր կարծիքը:

«Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները ներկայանալով նիստին բանավոր կարգով հայտնել են, որ Մասնակցի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հարկային պարտավորությունը առաջացել է պետական տուրքի գումարից, այն ժամանակին չի վճարվել աշխատակցի մեղավորության պատճառով, այն 03.06.2019թ.ի դրությամբ արդեն իսկ վճարված է Մասնակցի կողմից, ինչպես նաև ներկայացնելով ՀՀ ՊԵԿ կողմից տրված թիվ 821 տեղեկանքը, հայտնել են, որ 27.05.2019թ.-ի դրությամբ Մասնակիցը ունեցել է գերավճար, որից և պետք է հարկային մարմինը հաշվանցեր և մարեր առկա պարտավորությունը:

Ելնելով վերոգրյալներից, Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

4. <u>ՍՑ-LO-2019/101 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի տարածքում գտնվող նստարանների, խաղային սարքավորումների, զրուցատաղավարների, աղբամանների, խաղադաշտերի և անցուղիների վերանորոգման նախահաշվային փաստաթղթերի կազման աշխատանքների

ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/50» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով 27.05.2019թ.-ին հայտ է ներկայացրել նաև «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.05.2019թ. կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 31.05.2019թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտե արված հարցման արդյունքում պարզվել է, որ «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու (27.05.2019թ.) օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություն՝ 98 555 ՀՀ դրամ գումարի չափով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.06.2019թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը որոշել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից՝ «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժել՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների թույլատրելի շեմը գերազանցելու հիմքով:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 13.06.2019թ. Ընկերությանը տրված թիվ 821 տեղեկանքի համաձայն՝ 98 555 ՀՀ դրամ գումարի չափով պարտավորությունը գոյացել է պետական տուրքի վճարի գծով:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 13.06.2019թ. Ընկերությանը տրված թիվ 821 տեղեկանքի համաձայն՝ «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ն 27.05.2019թ.-ի դրությամբ ունի 155 289 ՀՀ դրամ մինչև 01.01.2018թ. և 81 593 ՀՀ դրամ՝ սահմանված չափից ավել վճարած միասնական հաշվում առկա գումարներ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 28.06.2019թ. թիվ 26/10894-2019 գրությամբ «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ … գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նար Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև

ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

ՀՀ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանված են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների հետևյալ հարկատեսակները՝ ԱԱՀ, շահութահարկ. եկամտային հարկ, ակցիզային հարկ, շրջանառության հարկ, արտոնագրային հարկ, բնապահպանական հարկ, ոչ ռեզիդենտի շահութահարկ, սոցիալական վճար, պետական տուրք, բնօգտագործման վճար, այլ հարկային եկամուտներ:

ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 18-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին և 2-րդ ենթակետերի համաձայն՝ միասնական հաշվի միջոցով մարվող հարկային պարտավորությունների մարման նպատակով հարկ վճարողները հարկի վճարումը կատարում են միասնական հաշվին: Հարկի վճարման հանձնարարականում վճարման նպատակի վերաբերյալ նշում չի կատարվում, իսկ նշում կատարվելու դեպքում այն հարկային մարմնի կողմից հաշվի չի առնվում:

Օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկային պարտավորություն է համարվում որևէ տեսակի հարկի և (կամ) վճարի, ինչպես նաև Օրենսգրքի և (կամ) վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքների դրույթները խախտելու համար հաշվարկված՝ Օրենսգրքով և (կամ) վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված տույժերի, տուգանքների, ինչպես նաև վնասի հատուցման գումարներ վճարելու՝ հարկ վճարողի պարտավորությունը…:

Օրենսգրքի 46-րդ՝ «հարկային պարտավորության կատարումը (մարումը)» վերտառությամբ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ միասնական հաշվի միջոցով մարվող հարկային պարտավորության կատարում (մարում) է համարվում Օրենսգրքին համապատասխան հաշվարկված՝ վճարման ենթակա հարկի, ինչպես նաև դրա գծով տույժերի և (կամ) տուգանքների գումարների հաշվեգրումը միասնական հաշվից համապատասխան հարկի գծով պարտավորությունը հաշվառող՝ պետական բյուջեի գանձապետական հաշվին:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ միասնական հաշվի միջոցով չմարվող հարկային պարտավորության (բացառությամբ տեղական հարկերի) կատարում (մարում) է համարվում Օրենսգրքին համապատասխան հաշվարկված՝ վճարման ենթակա հարկի, ինչպես նաև դրա գծով տույժերի և (կամ) տուգանքների գումարների՝

1) վճարումը համապատասխան հարկի գծով պարտավորությունը հաշվառող՝ պետական բյուջեի գանձապետական հաշվին.

2) միասնական հաշվի միջոցով չմարվող այլ հարկի գծով պարտավորությունը հաշվառող՝ պետական բյուջեի գանձապետական հաշվից գումարի հաշվանցումը տվյալ հարկի գծով պարտավորությունը հաշվառող՝ պետական բյուջեի գանձապետական հաշվին.

3) միասնական հաշվից գումարների հաշվանցումը տվյալ հարկի գծով պարտավորությունը հաշվառող՝ պետական բյուջեի գանձապետական հաշվին:

Օրենսգրքի 325-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հարկային պարտավորությունները մարվում են նախ միասնական հաշվում առկա գումարների հաշվին, այնուհետև՝ գանձապետարանի կողմից վարվող պետական բյուջեի միջոցների առանձին ենթահաշվում առկա՝ մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելն առաջացած գերավճարների հաշվին: Մարումներն իրականացվում են սույն մասում նշված գումարների առկայության օրով:

Վերոնշյալ հարկային օրենսգրքի հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը արձանագրում է, որ հարկային պարտավորություն է համարվում որևէ տեսակի հարկի և (կամ) վճարի, ինչպես նաև Օրենսգրքի և (կամ) վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքների դրույթները խախտելու համար հաշվարկված՝ Օրենսգրքով և (կամ) վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված տույժերի, տուգանքների, ինչպես նաև վնասի հատուցման գումարներ վճարելու՝ հարկ վճարողի պարտավորությունը, որոնք մարվում են նախ միասնական հաշվում առկա գումարների հաշվին, այնուհետև՝ գանձապետարանի կողմից վարվող պետական բյուջեի միջոցների առանձին ենթահաշվում առկա՝ մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելն առաջացած գերավճարների հաշվին:

Միասնական հաշվի միջոցով մարվող հարկային պարտավորությունների մարման նպատակով հարկ վճարողները հարկի վճարումը կատարում են միասնական հաշվին, իսկ միասնական հաշվի միջոցով չմարվող հարկային պարտավորության կատարում (մարում) է համարվում վճարման ենթակա հարկի, ինչպես նաև դրա գծով տույժերի և (կամ) տուգանքների գումարների՝

1) վճարումը համապատասխան հարկի գծով պարտավորությունը հաշվառող՝ պետական բյուջեի գանձապետական հաշվին.

2) միասնական հաշվի միջոցով չմարվող այլ հարկի գծով պարտավորությունը հաշվառող՝ պետական բյուջեի գանձապետական հաշվից գումարի հաշվանցումը տվյալ հարկի գծով պարտավորությունը հաշվառող՝ պետական բյուջեի գանձապետական հաշվին.

3) միասնական հաշվից գումարների հաշվանցումը տվյալ հարկի գծով պարտավորությունը հաշվառող՝ պետական բյուջեի գանձապետական հաշվին:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/50» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 31.05.2019թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտե արված հարցման արդյունքում պարզվել է, որ «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու (27.05.2019թ.) օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություն՝ 98 555 ՀՀ դրամ գումարի չափով:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 13.06.2019թ. Ընկերությանը տրված թիվ 821 տեղեկանքի համաձայն՝ «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ն 27.05.2019թ.-ի դրությամբ ունի 155 289 ՀՀ դրամ մինչև 01.01.2018թ. և 81 593 ՀՀ դրամ՝ սահմանված չափից ավել վճարած միասնական հաշվում առկա գումարներ, իսկ 98 555 ՀՀ դրամ գումարի չափով պարտավորությունը գոյացել է պետական տուրքի վճարի գծով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Մասնակցի 98 555 ՀՀ դրամ գումարի չափով առկա հարկային պարտավորությունները պետք է մարվեին նախ միասնական հաշվում առկա գումարների հաշվին (81 593 ՀՀ դրամ), այնուհետև՝ գանձապետարանի կողմից վարվող պետական բյուջեի միջոցների առանձին ենթահաշվում առկա՝ մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելն առաջացած գերավճարների հաշվին (155 289 ՀՀ դրամ):

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 28.06.2019թ. թիվ 26/10894-2019 գրությամբ «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**